ԱՇԽԱՏԱՆՔԱՅԻՆ ՄԻԳՐԱՑԻԱՆ ՀԵՏԽՈՐՀՐԴԱՅԻՆ ՀԱՅԱՍՏԱՆԻ ԳՅՈՒՂԱԿԱՆ ԲՆԱԿՉՈՒԹՅԱՆ ՇՐՋԱՆՈՒՄ

ԳԱԼՍՏՅԱՆ Մ. Վ.

Բնակչության արտագաղթը իր սոցիալ-տնտեսական, ժողովրդագրական, մշակութային հետևանքներով հետխորհրդային Հայաստանի առջև ծառացած կարևորագույն հիմնախնդիրներից է: Հայաստանը տարածաշրջանային անվտանգության տեսակետից կայացած պետություն դառնալու կարևորագույն երաշխիքներից մեկը մարդկային ներուժի զարգացման և հանրապետությունից դուրս բնակչության տեղաշարժերի նկատմամբ պետական քաղաքականության մշակումն է: Մինչդեռ քաղաքականության բացակայության, ինչպես նաև տնտեսական ճգնաժամի, բնակչության կենսամակարդա-կի անկման և գործազրկության բարձր տեմպերի պայմաններում 1990-ական թվականներից հետո Հայաստանի Հանրապետությունից բնակչության միջպետական տեղաշարժերն ընդունել են զանգվածային բնույթ: ՀՀ ազգային վիճակագրական ծառայության տվյալներով, սկսած 1992 թ., Հայաստանը լքած բնակչության թիվը տատանվում է 900 հազարից մինչև 1 մլն մարդ[1]: ՄԱԿ-ի 1996 թ. Մարդկային զարգացման զեկույցում 1991-1995 թթ. տեղաշարժերի հետևանքով Հայաստանից մեկնել է 677 հազ. մարդ, կամ նրա բնակչության յուրաքանչյուր հինգերորդը մշտապես կամ ժամանակա-վորապես թողել է հանրապետությունը[2]: 2001 թ. մարդահամարի տվյալներով՝ Հայաստանի առկա և մշտական բնակչության տարբերությունը կազմել է 210417 մարդ[3], իսկ ըստ ակադեմիկոս Վ. Խոջաբեկյանի հաշվարկների՝ 1991-2000 թթ.-ին՝ 1մլն 250-ից մինչև 1 մլն 300 հազ. մարդ[4]: Տարբեր փորձագիտական հետազոտությունների համաձայն՝ 1990-2005 թթ. Հայաստանից արտագաղթել և այլ երկրներում բնակություն է հաստատել 700 հազարից մեկ մլն 300 հազ. մարդ, որը կազմում է 2008 թ. ՀՀ անվանական բնակչության 22-40%-ը, իսկ միայն 1992-1994 թթ.՝ 610-620 հազ. մարդ կամ հանրապետության բնակչության շուրջ 1/5-ը[5]:

---

[1] *Միգրացիոն իրավիճակը ՀՀ-ում, http:://backtoarmenia.am/?page=ma&hcat=85&*

[2] *Հայաստան, ՄԱԿ-ի Մարդկային զարգացման զեկույց, Ե., 1996, էջ 14:*

[3] *Հայաստանի Հանրապետության 2001 թ. մարդահամարի արդյունքները, Ե., 2003, էջ 143:*

[4] **Խոջաբեկյան Վ.,** *Հայաստանի բնակչության վերարտադրությունը և տեղաշարժերը XIX-XX դարերում, XXI դարի շեմին, Ե., 2001, էջ 308:*

[5] *Միգրացիա և մարդկային զարգացում. հնարավորություններ և մարտահրավերներ, Հայաստան, Ե., 2009, էջ19-39:*

2010 թ. միգրացիայի բացասական սալդոն, այսինքն՝ հանրապետությունից մեկնածների թվի գերազանցումը հանրապետություն ժամանածների համեմատությամբ կազմել է 41.2 հազ. մարդ[6]: Բերված վիճակագրական տվյալները ներառում են նաև Հայաստանից աշխատանքային միգրացիան[7]: Ըստ «Առաջադեմ սոցիալական տեխնոլոգիաներ» ՀԿ-ի հետազոտության տվյալների՝ 2002-2005 թթ. Հայաստանից մեկնած աշխատանքային միգրանտների բացարձակ թիվը կազմել է 116-147 հազ. մարդ կամ ՀՀ մշտական բնակչութ-յան 3.5-4.6%-ը[8], 2005-2007 թթ.՝ 96-122 հազ. մարդ կամ Հայաստանի մշտական բնակչության 3.0-3.8%-ը[9]: Համեմատական կարգով նշենք, որ բնակչության աշխատանքային տեղաշարժերը բնութագրական են ոչ միայն Հայաստանի, այլև նախկին Միության համարյա բոլոր հանրապետությունների համար: Այսպես՝ Ուկրաինայից ամեն տարի ժամանակավոր աշխատանքային միգրացիայի է մեկնում 2-7 մլն մարդ[10], իսկ Ուզբեկստանում նրանց թվաքանակը կազմում էր 600-700 հազ. մարդ[11]:

Ինչպես տեսնում ենք, Հայաստանի արտաքին միգրացիոն հոսքերի գերակշիռ մասը բաժին է ընկնում աշխատանքային միգրանտներին, որն էլ տնտեսական, ժողովրդագրական և սոցիալ-մշակութային առումով իր ազդեցությունն է թողնում հանրապետության, ներառյալ գյուղական բնակչության հասարակական կյանքի ու զարգացման ընթացքի վրա[12]: Իսկ սեռատարիքային և կրթական ի՞նչ բնութագրեր ունեն նրանք, որո՞նք են աշխատանքային միգրացիային մասնակցելու պատճառները, հիմնականում ո՞ր եր- կրներ են մեկնում և ո՞րն է դրանց ընտրության նախապատվությունը, մուտքի երկրներում աշխատանքային ո՞ր ոլորտներում են զբաղված և ինչքա՞ն եկամուտ են ստանում, սոցիալ-իրավական պաշտպանվածության տեսանկյունից ի՞նչ խնդիրների են առընչվում, համայնքային, մարզային և հանրապետական մակարդակով աշխատանքային միգրացիան տնտեսական, ժողովրդագրական, սոցիալ-հոգեբանական, մշակութային ի՞նչ հետևանքներ է ունենում: Նշված խնդիրները բացահայտելու համար էթնոսոցիոլոգիական հետազոտության ընթացքում միգրանտի վարքագիծը

---

[6] *Ընթացիկ միգրացիոն իրավիճակի գնահատում* http://backtoarmenia.am/?hcat=85&scat=86

[7] *Այդ երևույթի վերաբերյալ օգտագործվում են աշխատանքային միգրացիա, սեզոնային միգրացիա, արտագնա աշխատանք տարբեր անվանումներ: Գեղարքունիքի և Շիրակի մարզերի ժողովրդախոսակցական լեզվում մինչև 1990 թ. առավել օգտագործվում էր խոպանչիներ անվանումը, որի ծագումը կապված է 1950-1960-ական թթ. ՍՍՀՄ-ի խոպան հողերի յուրացման հետ:*

[8] *Աշխատանքային էմիգրացիան Հայաստանից 2002-2005 թթ., Ե., 2005, էջ 63:*

[9] *Աշխատանքային միգրացիան Հայաստանից 2005-2007 թթ., Ե., 2007, էջ 76:*

[10] **Прибыткова И. М.** *Трудовая миграция населения Украины в условиях трансформации экономических общественных отношений (Трудовая миграция в СНГ, М., 2003, с. 85).*

[11] **Максакова Л. П.** *Экспорт рабочей силы из Узбекистана (Трудовая миграция в СНГ, М., 2003, с. 149).*

[12] *Ըստ Ազգային վիճակագրական ծառայության տվյալների՝ 2010 թ. գյուղական բնակչությունը կազմել է Հայաստանի բնակչության 36%-ը: Տե՛ս Հայաստանի վիճակագրական տարեգիրք, 2010,* http://www.armstat.am/file/doc/99461548.pdf

դիտարկվել է որպես երեք փոխկապակցված փուլերի ամբողջություն[13].

1. Մինչաշխատանքային միգրացիային մասնակցելու փուլ: *Այդ փուլում բացահայտվել է այն գործոնների և սոցիալական ինստիտուտների դերը, որոնց անմիջական մասնակցությամբ անհատը կայացնում է միգրացիոն գործընթացին մասնակցելու որոշում, ինչպես նաև տրվել են անհատական կամ խմբային հոսքերով մասնակցության ձևերը:*

2. Բնակավայրից մեկնելու փուլ՝ աշխատանք և բնակություն այլէթնիկ միջավայրում: *Այդ փուլում ուսումնասիրվել են այլէթնիկ միջավայրում աշխատանքային միգրանտի կարգավիճակը (լեգալ, անլեգալ), նրանց սոցիալ-իրավական պաշտպանվածությունը և սանիտարահիգիենիկ պայմանները, այլէթնիկ միջավայրում միջանձային շփումները և ընտանիքին ցուցաբերվող նյութական աջակցության ձևերը: Հանրապետությունից դուրս ժամանակավոր միգրացիան մշտական բնակության վերածվելու պատճառները:*

3. Միգրանտի վերադարձը հարազատ բնակավայր: *Այդ փուլում ուսումնասիրվել են ընտանիքի ծախսերի ոլորտները, բարեկեցության մակարդակը, ընտանիքի վրա միգրացիայի ունեցած ազդեցությունը, մշակութային փոխառնչությունները և հետագա միգրացիոն վարքագիծը:*

Անդրադառնանք միգրանտների սեռատարիքային կազմին: Հարցմանը մասնակցած 360 տնային տնտեսություններից 249-ը վերջին 3 տարում մասնակցել է աշխատանքային միգրացիային: Այդ տնտեսություններից միգրանտների թվաքանակը կազմել է 317 մարդ: Տվյալ գործընթացին մասնակցել են գյուղական բնակչության տարիքային տարբեր խմբեր: Ըստ հետազոտության արդյունքների՝ աշխատանքային միգրացիոն գործընթացներում առավել ընդգրկված է 30-44 տարիքային խումբը, որի ներկայացվածությունը նրանց շրջանում կազմել է 36.6%, այնուհետև 45-60 և բարձր տարիքային խումբը՝ 33.8%, և 16-29 տարիքային խումբը՝ 30.6%: Գծապատկեր 1-ից երևում է՝ միգրանտների 67.2%-ը ակտիվ աշխատունակ տարիքում է, և այդ աշխատուժն իրացվում է հանրապետությունից դուրս՝ ստեղծելով բազմաթիվ նյութական և հոգևոր բարիքներ: Տարիքային մյուս խմբերը՝ 16-29տ. և 30-44տ., նաև ակտիվ վերարտադրողունակ են և կարող են կարևոր դեր ունենալ Հայաստանի բնակչության ժողովրդագրական իրավիճակի բարելավման վրա:

---

[13] *Հետազոտությունն իրականացվել է 2006-ին Հետազոտական Ռեսուրսների Կովկասյան Կենտրոններ (ՀՌԿԿ)-Հայաստան կենտրոնի Հետազոտական դրամաշնորհային ծրագրի շրջանակում: Քանակական հարցումներն իրականացվել են 4 մարզերի 12 գյուղական համայնքների 360 տնային տնտեսությունների, իսկ խորացված անհատական հարցազրույցները՝ աշխատանքային տեղաշարժերին մասնակցած 24 անձանց հետ: 2008-2010 թթ. խորացված հարցազրույցներ են անցկացվել նաև Տավուշի և Սյունիքի մարզերի 7 գյուղական համայնքների 19 աշխատանքային միգրանտների ընտանիքների հետ:*

Հետազոտության արդյունքները ցույց տվեցին, որ 93.1% տնային տնտեսություններում աշխատանքային միգրացիային մասնակցում են տղամարդիկ, իսկ 6.9% տնտեսություններում՝ կանայք: Կանանց մասնակցությունն այդ գործընթացին արձանագրում է հայ ընտանիքում կարգավիճակի և դերերի փոփոխությունները, քանի որ ավանդաբար այդ աշխատանքներով հիմնականում զբաղվել է տան տղամարդը: Կանայք հիմնականում ընդգրկվում են առևտրի և սպասարկման ոլորտում:

Գծապատկեր 1
Միգրանտների տարիքային կազմը



Գծապատկեր 2
Միգրանտների կրթությունը



Գծապատկեր 2-ի համաձայն՝ արձանագրում ենք հետևյալը. ըստ կրթամակարդակի՝ միգրանտների շրջանում առավել ներկայացված են միջնակարգ՝ 53.3%, այնուհետև թերի բաձրագույն և բարձրագույն՝ 22.1%, միջնակարգ մասնագիտական՝ 15.5%, և թերի միջնակարգ՝ 9.1%, կրթություն ունեցողները:

Ինչպես ցույց են տալիս հետազոտության արդյունքները, բարձր որակավորում ունեցող մարդկանց շրջանում աշխատանքային միգրացիան պայմանավորում է նաև սոցիալական վարընթաց շարժունություն, քանի որ նրանք հիմնականում ընդգրկվում են շինարարության ոլորտում և կատարում բանվորական աշխատանք[14]: Գործազրկության հետևանքով նրանք ստիպված կատարում են որակավորում չպահանջող տարբեր տիպի աշխատանքներ, և մի սոցիալական վիճակից մեկ ուրիշ սոցիալական վիճակի սահմանագծում հայտնվելն ավելի է խորացնում մարգինալության երևույթը:

---

[14] *Բավական է նշել, որ ըստ 1995-1996 թթ. միայն Լոռու և Շիրակի մարզերում հավաքված վիճակագրական նյութերի՝ դպրոցը հարկադրաբար թողնելով արտագնացության էին մեկնել երկար տարիների փորձ և հմտություն ունեցող շուրջ 20 ուսուցիչ և բարձրագույն կրթությամբ 370-ից ավելի տարբեր մասնագետներ: Տե՛ս* **Գալստյան Ս.,** *Հայաստանի Հանրապետության բնակչության աշխատանքային միջպետական տեղաշարժերը, Ռազմավարական և ազգային հետազոտությունների հայկական կենտրոն, Ե., 1998, էջ 36:*

Հետազոտության արդյունքներով՝ միգրանտների գերակշռող մեծամասնությունը՝ 69%-ը, պաշտոնապես ամուսնացած էր, իսկ 2.3%-ը, մի շարք հանգամանքների պատճառով, այն չէր գրանցել: Հարցվածների 24.6%-ը ամուրի էր: Միգրանտների 2,6%-ը նշել է իր ամուսնալուծված կարգավիճակի մասին, սակայն գյուղական համայնքներում, պայմանավորված հասարակական կարծիքով, ընտանիքում երեխայի առկայությամբ, պաշտոնապես այն չի ձևակերպել: Միգրանտների շրջանում գրանցված ամուսնալուծությունը կազմել է ընդամենը 1.5%:

Ըստ առկա սերունդների թվի՝ միգրանտների 53.9%-ը ներկայացնում էր պարզ տիպի ընտանիք (ամուսին, կին, երեխաներ), 46.1%-ը՝ բազմանդամ՝ երեք և ավելի սերունդ ունեցող ընտանիք: Սրանք համարվում են այն միջավայրը, որտեղից մեկնում են սեզոնային միգրացիայի: Մի հարկի ներքո ապրող երկու-երեք սերունդների առկայությունը խթանում է ընտանիքից մի քանի աշխատունակ տարիքի մարդկանց աշխատանքային միգրացիային: Հարցմանը մասնակցած 75.9% տնային տնտեսություններից սեզոնային աշխատանքի մեկնել են մեկ, 20.4%-ից՝ երկու, 2 %-ից՝ երեք, 1.6%-ից՝ չորս, 0.4%-ից՝ հինգ միգրանտներ:

«Քանի՞ տարի է, որ մեկնում է / մեկնել էիր արտագնա աշխատանքի» հարցի պատասխաններից կարելի է եզրակացնել, որ 10.3%-ը ունի 1 տարվա, 18.2%-ը՝ 2, 18.8%-ը՝ 3, 22.3%-ը՝ 4-5, 15.8%-ը՝ 6-8, 10.6%-ը՝ 9-12, իսկ 4.1%-ը 13-16 տարիների արտագնա աշխատանքի «ստաժ»:

Անդրադառնանք հանրապետությունից միգրացիայի մղող գործոնների ուսումնասիրությանը: «Որո՞նք են արտագնա աշխատանքի մեկնելու հիմնական պատճառները» հարցի պատասխանները վկայում են, որ աշխատանքային միգրացիան Հայաստանում կապված է աշխատանքի բացակայության հիմնախնդրի հետ (80.1%): Ընդ որում, մասնակիցների 38.5%ը որպես վճռորոշ դրդապատճառ համարել է տեղում աշխատանքի, 27,9%-ը՝ բավարար եկամուտ ապահովող աշխատանքի, իսկ 13.5%-ը՝ մասնագիտությամբ աշխատատեղերի բացակայությունը: Այդ պատասխանները հանրապետությունում ունեն իրական հիմքեր և առաջին հերթին պայմանավորված են աշխատունակ բնակչության շրջանում առկա գործազրկության բարձր մակարդակով[15]: Դրա հիմքում ընկած է նաև այն մոտեցումը, որ հողի սեփականաշնորհումից հետո գյուղական բնակչության որոշ մասը գյուղատնտեսության ոլորտում զբաղվածությունը հոգեբանորեն դեռևս չի համարում աշխատատեղ և աշխատանքի հիմնական ոլորտ:

---

[15] *Ըստ ՀՀ ազգային վիճակագրական ծառայության՝ 2011 թ. հունվարի տվյալներով հանրապետությունում պաշտոնապես գրանցված գործազուրկների թիվը կազմել է 78.4 հազ. մարդ: Տե՛ս Հայաստանի Հանրապետության սոցիալ-տնտեսական վիճակը 2011-ի հունվարին http://www.armstat.am/am/?nid=45&year=2011: Պետք է ընդունել այն տեսակետը, որ բերված վիճակագրական տվյալները չեն արտացոլում Հայաստանի գործազրկության իրական պատկերը, քանի որ նրանց թվաքանակը առնվազն երեք անգամ ավելի շատ է:*

Հետազոտության արդյունքներով՝ Հայաստանից արտագնացնե-րի 85.5%-ը աշխատանքի է մեկնել ՌԴ, և միգրանտների համար այն դեռևս համարվում է ամենագրավիչ երկիրը: Սա առաջին հերթին պայմանավորված է ՌԴ աշխատաշուկայում կարճ ժամկետում բարձր եկամուտների ձեռքբերման և այնտեղ հասնելու մատչելիության հնարավորությամբ, ՌԴ-ի վերաբերյալ համեմատաբար բարձր տեղեկացվածությամբ, լեզվական արգելքների բացակայու-թյամբ, ինչպես նաև ՌԴ-ում շուրջ 1-միլիոնանոց հայկական համայնքի առկայությամբ[16]: Միգրանտների 3.1%-ը աշխատանքի է

Աղյուսակ 1

Աշխատանքային միգրացիայի
մեկնելու հիմնական դրդապատճառները

Տեղում աշխատանքի բացակայությունը	38,7
Ցածր աշխատավարձը, որը չէր բավականացնում նորմալ ապրելու համար	27,9
Մասնագիտությամբ աշխատատեղերի բացակայությունը	13,5
Գործարարությամբ զբաղվելու համար պայմանների բացակայությունը	10,1
Հայաստանի զարգացման հեռանկարների բացակայությունը	5,3
Իրավական անպաշտպանվածությունը	3,7
Այլ	0,7
Ընդամենը	100,0

մեկնել Ուկրաինա, 3.3%-ը՝ Ղազախստան, իսկ մնացածը՝ եվրոպական երկրներ: «Հատկապես ինչո՞ւ է ընտրել / ընտրեցիք այդ երկիրը» հարցի պատասխաններից պարզվել է, որ մասնակիցների 24,4%-ի համար կարևոր դեր են ունեցել այնտեղ բնակվող ծանոթները և ընկերները, 23.2%-ի համար՝ հարազատները, բարեկամները, ընտանիքի անդամները: Նշված փաստը վկայում է՝ Հայաստանից աշխատանքային միգրացիայի կարևոր մեխանիզմ դեռևս մնում են ոչ ֆորմալ միջանձային հարաբերությունները՝ ընկերային, ազգակցական և բարեկամական կապերը: Ընդհանրապես, պետք է նշել, որ արտագնա աշխատանքը համարվում է հանրապետությունից շղթայական արտագաղթի ձևավորման կարևոր աղբյուր և միգրացիայի ուղղվածության վրա ազդող կարևոր գործոն՝ գյուղական բնակավայրերում դեռևս ամուր կերպով պահպանվող ազգակցական կապերի, դրա-ցիական և ընկերական փոխհարաբերությունների շնորհիվ: Ռուսաստանի

---

[16] *ՌԴ դեսպանատան գլխավոր միգրացիոն ծառայությունը ՀՀ-ում 2010 թ. իրականացնում էր «Արտերկրում բնակվող հայրենակիցների կամավոր բնակեցում Ռուսաստանի տարածքում» ծրագիրը: Ըստ դրա՝ Հայաստանից հավաքագրված բարձր որակավորում ունեցող մասնագետներին հնարավորություն է տրվում ՌԴ 33 մարզերից որևէ մեկում աշխատելու և բնակություն հաստատելու: Տեղափոխման հետ կապված բոլոր ծախսերը հոգում է ՌԴ-ն: «Շիրակի կենտրոն» ՀԿ-ի նախագահ Վ. Թումասյանի կարծիքով՝ միայն Շիրակի մարզից այդ ծրագրի շրջանակում մեկնել է շուրջ 1000 մարդ: Տե՛ս Ո՞վ կհանգցնի Շիրակի լույսը, http://www.shirakcentre.org/index.php/hy/news/693-shirak-centre-ngo.html*

Դաշնությունում և նշված ԱՊՀ մյուս երկրներում ազգակիցների, հարազատների, բարեկամների, ընկերների և ծանոթների առկայությունը կանխորոշում է Հայաստանից դուրս գյուղական բնակչության միգրացիոն ուղղվածությունը: Հետագայում նրանք իրենց մոտ աշխատանքի են հրավիրում իրենց ընտանիքի մյուս անդամներին, հարազատնե- րին, բարեկամներին, ընկերներին, որոնք, բացի աշխատանքի անցնելուց, հնարավորության դեպքում հաստատվում են մշտական բնակության[17]:

Ի տարբերություն Գեղարքունիքի, Շիրակի և Կոտայքի մարզերի՝ մինչև 1990-ականները Վայոց ձորի մարզից աշխատանքի նպատակով հանրապետությունից դուրս տեղաշարժերը համարյա չեն դիտարկվել և կազմել են շատ ցածր տոկոս: Սակայն դրանից հետո աշխատատեղերի կրճատման և գործազրկության հետևանքով աշխատունակ բնակչությունը սկսեց աշխատանք փնտրել հանրապե- տությունից դուրս[18]: Հայաստանից աշխատանքային միգրացիան, ըստ հարցման մասնակիցների, տեղի է ունենում անհատական (44.1%) և խմբային (55,9%) հոսքերով: Նյութերի վերլուծությունը ցույց է տալիս, որ արտագնա աշխատանքի վայր մեկնած խմբերի (կամ ինչպես իրենք են անվանում՝ բրիգադների) ձևավորմանը խթանում են գյուղական բնակավայրերում առկա ազգակցական, բարեկամական, ընկերային, դրացիական ամուր փոխհարաբերությունները: Ինչպես անհատական, այնպես էլ խմբային տեղաշարժերը Հայաստանից դեպի այլ երկրներ մշտական բնակություն հաստատելու հիմնական աղբյուրներից են: Միգրանտների գերակշռող մեծամասնությունը (70.4%) ՌԴ-ում ընդգրկվում է շինա-

---

[17] 1960-ական թթ. մինչև այժմ Գեղարքունիքի մարզի Սարուխան գյուղի բնակչության երրորդ սերունդը հիմնականում արտագնացության է մեկնել այն բնակավայրերը, որտեղ տարիներ շարունակ մեկնել են նրանց պապերն ու հայրերը: Այդ ընտանիքների որոշ մասը ոչ միայն մշտական բնակություն է հաստատել, այլև տեղական իշխանությունների և գործարարների հետ ունի լայն կապեր: Նրանք հիմնականում մեկնում են Ռուսաստանի Դաշնության Նովոսիբիրսկ, Չելյաբինսկ, Սարատով, Վոլգոգրադ, Սոչի, Նիժնի Նովգորոդ, Տյումեն, Եկատերինբուրգ քաղաքները և դրանց մարզերը, ինչպես նաև Ուկրաինա և Ղազախստան: Նույն գործընթացն է դիտարկվում նաև Շիրակի մարզի Ազատան գյուղում, որտեղ յուրաքանչյուր երկրորդ տնտեսություն արտագնաց ունի ՌԴ-ի Հեռավոր Արևելքում՝ Յակուտիայում, իսկ Փանիկ գյուղից հիմնականում մեկնում են Իրկուտսկի և Չիտայի մարզեր:

[18] Օրինակ՝ 1992 թ. հետո Արենի գյուղից մի քանի երիտասարդներ առևտուր անելու նպատակով մեկնել են ՌԴ Կրասնոյարսկի մարզ և հետագայում հաստատվել են այնտեղ: Հետո տարել են իրենց ընտանիքներին, այնուհետև հարազատներին, բարեկամներին, ընկերներին, և ներկայումս գյուղից այնտեղ մշտական բնակություն է հաստատել շուրջ 35 ընտանիք: Ամեն տարի գյուղից մի քանի շինա- բարական բրիգադներ են տանում և այնտեղ աշխատեցնում: Գյուղից աշխատունակ տարիքի տղամարդիկ սեզոնային աշխատանքի են մեկնում նաև Մոսկվայի մարզ: Ելփին գյուղից 2 եղբայրներ, որոնք մշտական բնակություն են հաստատել Ամուրի մարզում, 2002-2004 թթ. ամեն տարի միայն Արենի գյուղից շուրջ 70-80 տղամարդ են տարել Նախոդկա՝ շինարարությունում աշխատելու, և յուրաքանչյուր ամսվա համար նրանց վճարել են մոտ 500 դոլար: Նույն պատկերն է նաև Գլաձոր գյուղում, որտեղից արտագնացության է մեկնել և վերջին 10 տարվա ընթացքում Եկատերինբուրգի մարզում մշտական բնակություն հաստատել շուրջ 80, իսկ Մոսկվայում՝ 30 ընտանիք. նրանք զբաղվում են առևտրով և շինարարական աշխատանքներով:

բարության ոլորտում և կատարում շինարարական ու վերանորոգման տարբեր ծավալի աշխատանքներ: Հարցազրույցներից պարզ է դառնում, որ նրանց ճնշող մեծամասնությունը, որպես կանոն, ունի միջին հաշվով 2-3 շինարարական մասնագիտություն[19]:

Հետազոտության արդյունքներով՝ արտագնացների շրջանում աշխատանքային օրվա միջին տևողությունը տևում է շատ երկար՝ վաղ առավոտից մինչև ուշ երեկո, և ուղեկցվում է միջին մակարդակը գերազանցող լարված և ինտենսիվ աշխատանքով: Այսպես, նրանց ճնշող մեծամասնությունը (43.0%) օրական միջին հաշ- վով աշխատել է 11-13 ժամ, 23.7%-ը ավելի երկար՝ 14-15ժամ, իսկ 19.2%-ը՝ 9-10 ժամ: Հատկապես շինարարության ոլորտում գերլարված աշխատանքի հետևանքով նրանք պաշտպանված չեն դժբախտ պատահարներից, վնասվածքներից, իսկ վերջին տարիներին աճել է դրանց թիվը: Հարցվածների շուրջ 54.8%-ը շաբաթվա ընթացքում աշխատել է առանց հանգստյան օրվա, և միայն 24.7%-ն է նշել, որ ունեցել է հանգստյան օր:

Մուտքի երկրներում աշխատանքային միգրանտների համար դեռևս խոցելի են նաև սանիտարահիգիենիկ պայմանները: Այսպես, միգրանտների 40.9%-ը բնակվում է այն նույն օբյեկտներում, որտեղ նրանք աշխատում են: Դրանք հիմնականում կիսավարտ շինարարական կառույցներ են, որտեղ բացակայում են կենցաղային տարրական պայմանները: Նրանք լուծում են նաև կենցաղային մի շարք խնդիրներ:

Աշխատուժի արտահանման միջպետական պայմանագրերի բացակայության հետևանքով մինչև արտագնացության մեկնելը մի շարք հարցերի շուրջ միգրանտները պայմանավորվածություն են ձեռք բերում տեղում՝ խմբի բրիգադիրի կամ դրսում աշխատանքի կանչող մասնավոր անձանց հետ: Երկու դեպքում էլ՝ պայմանավորվածությունը ձեռք է բերվում առանց գրավոր պայմանագրի՝ բանավոր, փոխվստահության գործոնի հիման վրա, ինչն իրավական տեսանկյունից նրանց դարձնում է առավել անպաշտպան: Նրանք հաճախ մինչև մեկնելը շատ քիչ են տեղեկացված և մասամբ պատկերացում ունեն մուտքի երկրներում կատարվող աշխատանքի, սոցիալ-կենցաղային պայմանների, մուտքի թույլտվության և բնակության խնդիրների մասին: Ուշագրավ է, որ արտագնա աշխատանքից վերադարձածների 49.8%-ի կարծիքով կանխավ ձեռք բերված պայմանավորվածությունն իրականացվել է ոչ ամբողջապես, իսկ 9.4%-ի կարծիքով՝ ընդհանրապես չի իրականացվել: Այսինքն՝ նրանք հաճախ այդ հարցում իրենց համարում են խաբված, քանի որ «կանչողը» չի կատարել իր խոստումները: Հարցազրույցներից պարզվեց, որ դրանց գերակշռող մասը վերաբերում է կատարված աշխատանքի դիմաց աշխատավարձ չվճարելուն կամ պակաս վճարելու խնդրին: Իսկ հարցվածների որոշ մասը մուտքի երկիր մեկնելուց հետո չի

---

[19] *Տե՛ս* **Шабанова М. А.** *Сезонные строители в сибирском селе (Известия Сибирского отделения АН СССР, Экономика прикладной социологии, вып. 2, 1986, N 7, с. 49).*

ունեցել աշխատանք և երկար ժամանակ եղել է հարկադրված պարապուրդի մեջ: Ըստ հարցման արդյունքների՝ միգրանտ-ների շուրջ 54.8%-ը չի ունեցել կնքված գրավոր պայմանագիր: Նրանք, շրջանցելով մուտքի երկրների օրենսդրությամբ սահմանված կարգը, շատ հաճախ հայտնվում են անօրինական միգրանտի կարգավիճակում՝ որոշակի խնդիրներ ստեղծելով ինչպես իրենց, այնպես էլ տեղի իշխանությունների համար: Հետազոտության արդյունքներով՝ նրանց 17.1%ը մուտքի երկրներում պաշտոնապես ձևակերպված չի եղել և այնտեղ ապրել ու աշխատել է անլեգալ: Հանգամանք, որը մեծացնում է թրաֆիքինգի ենթարկվելու ռիսկայնությունը:

Մուտքի երկրներում աշխատանքային ոչ բոլոր միգրանտներն հնարավորություն ունեն շփվելու տեղաբնակների հետ: Ըստ հետազոտության՝ տեղաբնակների հետ շփվել է նրանց 61.3%-ը: Անշուշտ, շփումների շնորհիվ մուտքի երկրներում հայ միգրանտներն արտահանում են ոչ միայն ազգային մշակույթի մի շարք տարրեր, այլև կենցաղամշակութային սեփական համալիր են ներմուծում նոր գծեր, վարքի կանոններ, արժեքներ: Միգրանտների շուրջ 27.9%-ը չի շփվել տեղաբնակների հետ: Դա առաջին հերթին պայմանավորված է օտարերկրյա քաղաքացիների նկատմամբ անձնագրային ռեժիմի կանոնակարգման հանգամանքներով[20]: Բացի դրանից, մուտքի երկրներից արտաքսման վտանգը հետ է պահում անօրինական միգրանտներին՝ շփվելու տեղաբնակների հետ. նրանք անգամ դուրս չեն գալիս իրենց աշխատավայրից: Հաճախ դա կատարում են գործատուի անմիջական պահանջով և վերահսկողությամբ: Շփումների հիման վրա միգրանտները գնահատել են նաև տեղաբնակների վերաբերմունքը: Այսպես, 38.6%-ը տեղաբնակների վերաբերմունքը գնահատել է բավարար, իսկ 13.5%-ը՝ լավ: Այսինքն՝ շուրջ 52.1%-ը այդ հարաբերությունները գնահատել է դրական: Հետևաբար ակներև է, որ տեղաբնակների կողմից աշխատանքային միգրանտների նկատմամբ առկա է հանդուրժողականության մթնոլորտ: Միգրանտների միայն 12.2%-ի կարծիքով է, որ տեղաբնակների վերաբերմունքն իրենց նկատմամբ եղել է բացասական:

Հետազոտության արդյունքներից կարելի է եզրակացնել, որ գյուղական բնակչության ցածր կենսամակարդակի և գործազրկու-թյան առկա բարձր տեմպերի պայմաններում աշխատանքային տեղաշարժերը դարձել են նրանց եկամուտների գոյացման կարևոր աղբյուր և աղքատության դիմակայության ռազմավարություն: «Որո՞նք են Ձեր տնտեսության եկամտի հիմնական աղբյուրները» հարցի պատասխաններից ակնհայտ է, որ նրանց եկամուտների աղբյուրների կառուցվածքը տարբեր է միգրանտներ ունեցող և միգրանտներ չունեցող ընտանիքներում: Հարցվածների 26,9%-ը գյուղատնտեսական գործունեությունից ստացված եկամուտներից հետո (34.6%) միգրացիոն գործունեությունից ստացված

[20] *Миграция и новые диаспоры в постсоветских государствах, М., 1996, с. 42-44.*

գումարները համարել է տնտեսության եկամուտների ձևավորման երկրորդ կարևոր աղբյուր: Արտագնա աշխատանքից ստացված եկամուտների վերաբերյալ որոշակի պատկերացում է տալիս գծապատկեր 3-ը, ըստ որի՝ միգրանտների միայն 10.7%-ը չի կարողացել այնտեղից գումարներ ուղարկել: Նրանք հիմնականում այն միգրանտներն են, որոնց աշխատանքի դիմաց գործատուները երբեմն խաբել և չեն վճարել: Միգրանտների 89.3%-ի շրջանում արտագնա աշխատանքի վայրից ուղարկված գումարի չափը տատանվում է 100- 3000 ԱՄՆ դոլարի սահմաններում: Սա նշանակում է, որ շնորհիվ աշխատանքային միգրացիայի՝ հսկայական քանակի տարադրամ է ներհոսում Հայաստան: Ըստ ՀՀ կենտրոնական բանկի տվյալնե-րի՝ 2007-2010 թթ. դեպի Հայաստան ուղղված մասնավոր տրանսֆերտների ծավալները կազմել են 1,319 (2007), 1.635 (2008), 1.124 (2009) և 1.293 (2010) մլրդ ԱՄՆ դոլար[21]:

Գծապատկեր 3

Մուտքի երկրներից ընտանիք ուղարկված գումարները ($-ով)



Հետազոտության արդյունքներից պարզվեց, որ արտագնա աշխատանքի վայրից ուղարկված գումարները նրանց 35.3%-ը հիմնականում ուղղում է ընտանիքի առաջնային կարիքների բավարարմանը: Սա նշանակում է, որ այդ կապիտալն էական դեր չու- նի գյուղական բնակավայրերի սոցիալ-տնտեսական և մշակութա-յին ենթակառուցվածքների ձևավորման գործում: Այդ գումարներով արտադրության միջոցներ է ձեռք բերել միգրանտների միայն 1.1%-ը:

---

[21] **Մեսրոպյան Հ.,** *Հայաստանում սոցիալ-տնտեսական վիճակը գտնվում փլուզման եզրին, www.arminfo.info/armenian/economy/article/16-02.../02-50-00 -*

Ծախսերի կառուցվածքի հաջորդ կարևոր ուղղությունն առընչվում է գյուղատնտեսական ոլորտին: Այդ գումարների հաշվին տնտեսությունների շուրջ 21.7%-ը կարողանում է հոգալ գյուղատնտեսական աշխատանքների համար անհրաժեշտ ծախսերը:

Աղյուսակ 2-ից երևում է, որ ծախսերի զգալի մասն ունի էթնիկ ուղղվածություն, և դրանք կարևոր դեր են կատարում արտագնացների միգրացիոն վարքագծի ձևավորման գործում: Այստեղ առաջին հերթին նկատի ունենք բնակարանի կառուցման (17.4%), ամուսնության, հարսանեկան արարողությունների և օժիտի ձեռքբերման (11.8%), երեխաների ուսման (3.3%) հետ կապված ծախսերը:

Աղյուսակ 2

Ուղարկված գումարների հիման վրա կատարված նպատակային ծախսերը
(միգրանտներ ունեցող տնային տնտեսություններ)

Գյուղատնտեսական աշխատանքներ	21,7
Մնունդ, հագուստ և ընթացիկ ծախսեր	35,3
Ամուսնություն, հարսանիք, օժիտ և այլ արարողություններ	11,8
Տան կառուցում (գնում) վերանորոգում	17,4
Ուսման վարձավճար	3,3
Ավտոմեքենա, կահույք և երկարատև օգտագործման այլ առարկաների ձեռքբերում	6,5
Արտադրության միջոցների ձեռքբերում (հող, անասուն, գյուղտեխնիկա, օբյեկտ)	1,1
Այլ	2,8
Ընդամենը	100,0

Ինչպես տեսնում ենք, աշխատանքային միգրացիան որոշակի դրական ազդեցություն է ունենում նրանց տնային տնտեսության վիճակի վրա: Ուշագրավ է, «Ինչպե՞ս կբնութագրեիք Ձեր ընտանիքի տնտեսական վիճակը» հարցի միջոցով շատ քիչ, բայց որոշ տարբերություններ կարող ենք տեսնել միգրանտներ ունեցող և միգրանտներ չունեցող տնային տնտեսությունների գնահատականներում:

Աշխատանքային միգրացիան ընտանիքի, համայնքի և հանրապետության մակարդակով բացասական ազդեցություն է ունենում ժողովրդագրական իրավիճակի, հատկապես սեռատարիքային կազմի համամասնության վրա: Ընտանիքի մակարդակով գնահատելով այդ խնդիրը՝ հարցվածների միայն 36.7%-ն է նշել, որ այն ազդեցություն չի ունենում երեխաների թվաքանակի աճի վրա, իսկ դրական գնահատողների կողմնակիցները կազմել են ընդամենը 1.4%: Մինչդեռ հարցվածների շուրջ 61.9%-ի կարծիքով աշխատանքային միգրացիան ազդում է ընտանիքներում երեխաների թվաքանակի աճի վրա: Այն հաճախ ուղեկցվում է երիտասարդների մշտական բնակավայրի փոփոխությամբ, ինչը հիմք է համայնքային բնակչության ծերացման համար:

Հանրապետական մակարդակով փաստորեն այդ աշխատուժը չի մասնակցում իր երկրի ՀՆԱ-ի ստեղծմանը: Նա այն ստեղծում է երկրի սահմաններից դուրս և չի մասնակցում ազգային տնտեսության զարգացման խնդիրներին և էկոնոմիկայի զարգացմանը[22]:

Աշխատանքային միգրացիան լուրջ մարտահրավեր է հայ ընտանիքի ամրությանը, քանի որ տնտեսության գլխավորը տարվա մեծ մասը գտնվում է ընտանիքից դուրս՝ այլէթնիկ միջավայրում, որը թուլացնում է շփումները և փոխհարաբերությունները ընտանիքի մյուս անդամների հետ: Ընտանիքի անդամների միջև ժամանակավոր բաժանումը բարձրացնում է ամուսնալուծության ռիսկայնության աստիճանը: Միգրանտի երկարատև բացակայությունը հանգեցնում է բարոյական և հոգեբանական մի շարք լուրջ հիմնախնդիրների, մասնավորապես ամուսնալուծությունների և անկայուն ու լքված ընտանիքների թվի աճի: Հարցվածների 65.8%-ի կարծիքով՝ աշխատանքային միգրացիան նպաստում է ամուսնալուծությունների աճին, թեև գյուղական համայնքներում դեռևս ամուր կերպով պահպանվող ազգային ավանդույթների և հասարակական կարծիքի ազդեցությամբ դրանք հաճախ չեն ստանում պաշտոնական ձևակերպում[23]:

Գծապատկեր 5

Ընտանիքի տնտեսական վիճակի գնահատում



Մուտքի երկրներում լայնորեն տարածում ունեն միգրանտների արտամուսնական կապերը: Հաճախ է հանդիպում նաև երկրորդ ընտանիք ունենալու երևույթը: Ելնելով այն հանգամանքից, որ նրանք են ընտանիքին նյութական

---

[22] **Խոջաբեկյան Վ.,** *նշվ. աշխ., էջ 318-323:*

[23] *Գեղարքունիքի մարզի Ծակքար գյուղում, օրինակ, հաշվվում է շուրջ 10, իսկ Սարուխան գյուղում՝ յուրաքանչյուր տարի միջին հաշվով 1-3 նման դեպք:*

միջոցներով հիմնական ապահովողները՝ վերոնշյալ վարքագիծը հաճախ հանդուրժում են ընտանիքի մյուս անդամները: Միգրանտների կանայք դա պատճառաբանում են հետևյալ կերպ. «Դրսում ինչ ուզում են՝ թող անեն, կարևորը, որ կարողանում են պահել իրենց ընտանիքը»[24]: Տան տղամարդու բացակայության օրոք տնային տնտեսության և գյուղատնտեսական աշխատանքների ողջ հոգսն առաջին հերթին ընկնում է կնոջ ուսերին:

Հարցման մասնակիցների 85%-ի կարծիքով՝ միգրացիան ամենախիստ բացասական ազդեցությունն է ունենում միգրանտի առողջական վիճակի վրա: Մուտքի երկրներում առանց հանգստյան օրերի, երկարատև և ծանր ֆիզիկական աշխատանքի, ոչ կանոնավոր սննդի և կենցաղային վատ պայմանների առկայության հետևանքով նրանք ձեռք են բերում մի շարք հիվանդություններ: Դրա բացասական դրսևորումներից է նաև աշխատանքային շահագործման և թրաֆիքինգի երևույթը: Այդ առթիվ հարցվածները պատմել են իրական դեպքեր, երբ ուժի, սպառնալիքի և հարկադրանքի գործադրմամբ միգրանտները աշխատել են վաղ առավոտից մինչև ուշ գիշեր, սահմանափակվել են նրանց տեղաշարժերը, բայց դրա դի-մաց չեն վճարվել: Հարցվածների 26%-ը նշել է այդպիսի 14 դեպք, և այդ մասին հիմնականում պատմել են նրանք, որոնց ընտանի-քի անդամները տարիներ շարունակ մեկնել են աշխատանքային միգրացիայի:

Միգրացիան դրական ազդեցություն է ունենում նրանց լեզվական իմացության վրա: Այլէթնիկ միջավայրում՝ Ռուսաստանի Դաշնությունում, նրանց գործունեությունը ոչ միայն նպաստում է ռուսաց լեզվի իմացությանը, այլև այդ երկրներում բարձրագույն կրթություն ստանալուն[25]:

Աշխատանքային միգրացիայի հետևանքով միգրանտների որոշ մասը, որ տարիների ընթացքում ձեռք է բերել մեծ կարողություն, որոշակիորեն նպաստում է գյուղական համայնքների զարգացման գործին: Նրանց շրջանում մեծ տարածում է ստացել բարեգործությամբ զբաղվելը[26]: Արտագնացությունը ազդում է նաև գյուղի բարեկեցության մակարդակի վրա:

---

[24] **Գալստյան Մ.,** *Ընտանիքի հիմնախնդիրները տնտեսական տեղաշարժերի համատեքստում (Ընտանիքի հետազոտման հիմնախնդիրներ, Ե., 2001, էջ27-29):*

[25] *Վայոց ձորի մարզի Գլաձոր գյուղից Մոսկվայի բուհերում սովորում են շուրջ 15, իսկ Գեղարքունիքի մարզի Սարուխան գյուղից՝ Նիժնի Նովգորոդ, Չելյաբինսկ, Սարատով, Օրսկ, Կեմերովո քաղաքներում շուրջ 30 երիտասարդներ:*

[26] *Ռուսաստանի Դաշնությունում գտնվող հարուստ համագյուղացիները ֆինանսավորել են Վայոց ձորի մարզի Գլաձոր գյուղի 3 կմ խմելու ջրի խողովակների վերանորոգումը: Գեղարքունիքի մարզի Ծակքար գյուղի վերին և ներքին թաղամասերում խմելու ջրի խողովակներ անցկացնելու համար նրանք հատկացրել են 8000 ԱՄՆ դոլար, իսկ դպրոցին պիտույքներ գնելու համար՝ 132 հազար դրամ: Շիրակի մարզի Ազատան գյուղի արտագնացները գյուղի զարգացման հիմնադրամին նվիրել են 36 մլն դրամ:*

ТРУДОВАЯ МИГРАЦИЯ СЕЛЬСКОГО НАСЕЛЕНИЯ ПОСТСОВЕТСКОЙ АРМЕНИИ

ГАЛСТЯН М. В.

Резюме

Миграция населения в силу ее социально-экономических, демографических и культурных последствий является одной из важнейших проблем, вставших перед постсоветской Арменией. Социологический опрос, проведенный с целью выявления особенностей трудовой миграции в Армении, приводит к заключению, что наряду с некоторыми отрицательными сторонами, миграция положительно влияет на повышение культурного уровня мигрантов, способствуя, в частности, усвоению языка той или иной страны, а в некоторых случаях – получению высшего образования.

В целом миграция позитивно сказывается на повышении уровня благосостояния сельского населения, поскольку многие мигранты, накопившие материальные средства, вкладывают их в развитие своих сельских общин.